

Թուղթ առ Պրն. Թորգոմ Փութաճեան

Թուղթ առ բոլոր անտարբերներուն

« Հիմի՞ էլ յո՞ւնք եղբայրք»

Կարդացինք Պրն. Թորգոմ Փութաճեանի թուղթը. իր բառերով «կարելի չէ հայ մարդ ըլլայ եւ չսպառի եւ չտրտմի» (երբ Պոլսոյ Պատրիարքը դատ կը բանայ Բարեգործականին դէմ): Այո, կարելի չէ հայ մարդ ըլլայ եւ չսպառի եւ չտրտմի եւ յո՞ւնք երբ մեր ամէնէն փառաւոր Հաստատութիւններէն մէկը, կրթական փայլուն պատմութիւնով օճախ մը տարիներով անհոգութեան կը մատնուի, կը փակուի եւ կ'անհետանայ:

Թէ ի՞նչ մղեց Պատրիարքը որ նման քայլ մը առնէ, մեզի ծանօթ չէ: Գիտեմ որ տարիներով Մեյգոնեան Աանուց Միութիւնը սպասեց, խնդրեց, աղաչեց որ օր մը մէկը միջամտէ կամ օր մը մէկը New York-էն իրենց հետ խօսի: Տարիներ սպասելէ ետք հրաշք դատ բազուելէ յետոյ հեռաձայնը գանգեց:

Մեյգոնեանը դարձոյ մը չէ նման մեր շատ ուրիշ դպրոցներու: Յատուկ է: Ան անմիջականօրէն կապուած է 1915-ի աղէտին: Երբ այսօր կը փորձենք ամէն օր օտարին 1915-ը յիշեցնել, սորվեցնել, Մեյգոնեանը տարիներով անտարբերութեան մատնելը եւ փակելը հաւասար է անխելքութեան: Ճիշդ հակառակը պէտք էր եղած ըլլար: Դպրոցը պէտք էր աւելիով հոգաճութեան արժանի դառնար ՀԲԸՄ-ի կողմէ, աւելիով, փայլեր եւ ներկայ փաստը ըլլար մեր պատմութեան: Զարդէն որքանոց եւ որքանոցէն փայլուն կրթական հաստատութիւն: Կրնայինք գայն մերանուանել «Melkonian Orphanage and Educational Institute» ի յիշատակ մեր 1915-ի որբերուն եւ գոհերուն: Ո՞ր էինք եւ ո՞ր հասանք:

Դժբախտաբար տեղ մըն այ չենք հասած: Յաւային այն է, որ հազարաւոր հայեր յուռ մնացին այս ամօթին առջեւ: Լուռ մնացին մեր եկեղեցական եւ կուսակցական առաջնորդները, որոյհետեւ իրենք մեյգոնեանցի չէին կամ կը վստահէին ՀԲԸՄ-ի անսխալութեան, կամ իրենց անձնական (ոչ ազգային) հաշիւները ըրին:

Ճիշդը ըսելու համար ժողովուրդի 90 տոկոսը անտարբեր է ոչ միայն Մեյգոնեանի հանդէպ, այլ մեր ազգային կեանքով: Թէ ինչու մեր ժողովուրդը անտարբեր մնայ, հայելիին մէջ նայիլ պէտք է:

Մեյգոնեան Աանուցը անտարբեր եւ յուռ չմնաց: Այս տղաքը տարիներով գիտակցեցան Հաստատութեան անգեայի (պատմական) եւ ներկայի (իբրեւ կրթարան) կարեւորութեան եւ հետեւողականօրէն հետապնդեցին իրենց նպատակը, հակառակ որ բոլորի դուռները զոգ մնացին իրենց առջեւ: Մեր ազգը շատ պէտք ունի նման անձերու մեր բոլոր կազմակերպութիւններէն ներս: Բայց, անշահախնդիր եւ ճակատը բաց տղաներ ու աղօղիկներ այնպէս ինչպէս Մեյգոնեանը իրենց սորվեցուց ըլլայ:

ԼԵՒՈՆ ՂԱԶԱՐԵԱՆ